№1

Մենք հավասար ենք

Տեղեկատվական թերթիկ

Հունիս 2008

Unison

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Հավասար հնարավորությունների ստեղծում

Մարդու իրավունքների պաշտպանությունը կարևորվում է ցանկացած քաղաքակիրթ երկրում: Առավել պաշտպանության կարիք են զգում հասարակության խոցելի խմբերը, մասնավորապես հաշմանդամները: Հայաստանում նրանցից շատերը չեն մասնակցում հասարակական կյանքին, մեկուսացված են շրջապատից, զրկված են կրթություն ստանալու, աշխատելու, հանգստյան վայրեր այցելելու հնարավորությունից: Հիմնական պատճառներն են միջավայրի ֆիզիկական անմատչելիությունը և խնդրի նկատմամբ հանրության կարծրատիպային վերաբերմունքը: «Ունիսոն» ՀԿ-ն ակտիվորեն մասնակցում է հատուկ կարիքներով մարդկանց կյանքի բարելավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Ներկայումս «Ունիսոնը» Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի և Նիդեռլանդների Կառավարության աջակցությամբ իրականացնում է «Հավասար հնարավորությունների ստեղծում» նախագիծը:

Ծրագրի առաջին կոմպոնենտը կապված է հաշմանդամների ընտրական իրավունքի իրականացման հետ: 2008թ. նախագահական ընտրություններին «Ունիսոնը» հանդես եկավ դիտորդական առաքելությամբ, ինչպես նախընտրական քարոզարշավի ընթացքում կոչ անելով բոլոր քաղաքական ուժերին զուգորդել իրենց հեռուստատեսային գովազդը սուրդոթարգմանությամբ, այնպես էլ բուն քվեարկության ժամանակ:

Դիտորդությունը նպատակ ուներ հայտնաբերել, թե որքանով են պաշտպանվում հաշմանդամ ընտրողների իրավունքները: Որոշ տեղամասերում դիտորդների հարցերին հանձնաժողովի կողմից տրվում էին աբսուրդային պատասխաններ, օրինակ «մենք հաշմանդամների հարցերով չենք զբաղվում»: Իհարկե, դժվար է «զբաղվել» հաշմանդամի հարցերով՝ տեղադրելով ընտրատեղամասը վերելակ չունեցող կառույցի 2-րդ կամ ավելի բարձր հարկում, չկառուցելով թեքահարթակ շենքի մուտքի մոտ, չապահովելով տեղամասը կույր ընտրողների համար նախատեսված հատուկ կաղապարներով և ընդհանրապես անտեսելով հաշմանդամ քաղաքացիների ընտրական իրավունքը:

Նախագծի հաջորդ կարևորագույն նպատակն է հաշմանդամների զբաղվածության խնդրի լուծումը: Մեր երկրում ցուցանիշները շատ ցածր են. աշխատանքով ապահովված հաշմանդամների թիվը կազմում է ընդամենը 8 տոկոս: «Ունիսոնում» բացվել և գործում է Հայաստանում առաջին՝ հաշմանդամների զբաղվածության կենտրոնը, որի շնորհիվ արդեն շատ հաշմանդամներ գտել են աշխատանք: Դա նպաստել է ոչ միայն վերջիններիս կենսամակարդակի բարձրացմանը, այլ նաև հասարակության մեջ նրանց ներդաշնակ ինտեգրմանը:

Կենտրոնում ստեղծված է աշխատանք փնտրող հաշմանդամների մշտապես թարմացվող տվյալների բազա, որում արդեն կարող են ընդգրկվել նաև մարզերում ապրող հաշմանդամներ (տեղեկությունների համար դիմել (010) 52-21-70 հեռախոսահամարով):

Զբաղվածության կենտրոնը բանակցում է գործատուների հետ, ինչպես նաև հաշմանդամների համար անցկացնում է ռեզյումե կազմելու և հարցազրույցն անցնելու վերաբերյալ թրենինգներ: Երբեմն, ծագում է հոգեբանի աջակցության անհրաժեշտություն, քանի որ հաշմանդամներից ոմանք, մասնագիտական առումով աշխատանքին լիովին պատրաստ լինելով, հոգեբանական արգելքների պատճառով չեն ցանկանում աշխատել սովորական՝ ոչ-հաշմանդամների ընկերությունում (նույնիսկ գիտակցելով, որ զրկվում են բարձր աշխատավարձ ստանալու հնարավորությունից):

«Հավասար հնարավորությունների ստեղծում» ծրագրի շրջանակներում «Ունիսոնը» նախատեսում է Հայաստանի բոլոր մարզերում անցկացնել կլոր սեղան-քննարկումներ, որոնք ուղղված են այնտեղ բնակվող հաշմանդամների կյանքի որակի բարելավմանը, ինչպես նաև ՏԻՄ-երի ու տեղական ՀԿ-ների հետ համագործակցության խթանմանը:

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Իրավաբանի անկյուն
Հարց և պատասխան

Ես 2-րդ խմբի միայնակ հաշմանդամ եմ: Մի քանի տարի աշխատանք եմ փնտրում: Հաշմանդամության թոշակս շատ փոքր է, չի բավարարում նույնիսկ նվազագույն կարիքներս հոգալու համար:

Լսել էի, որ գործազուրկներին վճարվում է գործազրկության նպաստ: Դիմեցի զբաղվածության պետական ծառայություն՝ գործազուրկի կարգավիճակ ստանալու համար, սակայն ինձ մերժեցին, պատճառաբանելով, որ դրա իրավունքը չունեմ: Ճի՞շտ են արդյոք վարվել ինձ հետ:

Տ.Կ., 33 տարեկան., ք. Արարատ

Համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, «գործազուրկ են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի տեսակների), աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ»:

Այսինքն, ստանալով հաշմանդամության կենսաթոշակ, դուք չեք կարող ձեռք բերել գործազուրկի կարգավիճակ և ստանալ գործազրկության նպաստ:

Միևնույն ժամանակ, դուք կարող եք դիմել զբաղվածության պետական ծառայություն որպես աշխատանք փնտրող չզբաղված անձ, և օգտվել պետության կողմից կազմակերպվող անվճար մասնագիտական ուսուցման և վերապատրաստման ծրագրերի հնարավորություններից: Բացի դրանից, ձեզ կտրամադրվի անվճար խորհրդատվություն, տեղեկատվություն թափուր աշխատատեղերի և զբաղվածության ծրագրերի վերաբերյալ:

Մանրամասների համար կարող եք նաև այցելել «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պաշտոնական կայքը www.employment.am ինտերնետային հասցեով:

Իզաբելլա Կարապետյան,
«Ունիսոն» ՀԿ իրավաբան

Մասնակցե՛ք հաշմանդամ կանանց գեղեցկության 4-րդ ֆոտոմրցույթին

2004թ.-ից «Ունիսոնը» անցկացնում է 16-40 տարեկան հաշմանդամ կանանց և աղջիկների գեղեցկության ամենամյա ֆոտոմրցույթ: Մրցույթի նպատակն է ապացուցել, որ իսկական գեղեցկությունը ոչ մի պարագայում չի խամրում: Տարեցտարի մասնակիցների թիվը ավելանում է, իսկ մրցանակաբաշխության արարողությունը ավելի հանդիսավոր բնույթ է կրում:

Ընտրությունը կատարում է Հայաստանում հեղինակություն վայելող գործիչներից կազմված ժյուրին: Տարբեր տարիներին ժյուրիի կազմում ընդգրկվել են Երվանդ Երզնկյանը, Մարտին Վարդազարյանը, Աշոտ Ղազարյանը, Ֆորշը, Ալեքսանդր Գրիգորյանը և այլ հանրահայտ մարդիկ:

Բացի հիմնական՝ «Միսս Գեղեցկություն» նոմինացիայից, տեսնվում են նաև այլ անվանակարգեր՝ «Միսս ժպիտ», «Միսս Նրբագեղություն», «Միսս Հմայք»... Լավագույն տասնյակում ընդգրկված մասնակիցները պարգևատրվում են մրցանակներով:

Արդեն ընդունվում են 2008թ. մրցույթի հայտերը: Մասնակցե՛ք ֆոտոմրցույթին, և միգուցե հենց դուք կարժանանաք գլխավոր մրցանակին և Միսս Գեղեցկություն - 2008 տիտղոսին:

Տեղեկությունների համար դիմեք (010) 52-21-70 հեռախոսահամարով:

Նորաձևության աշխարհի հայտնությունը

- Կեցցե նորաձևությունը,- բացականչեց հանրահայտ ֆրանսիացի դիզայներ Ժան-Պոլ Գոտյեն՝ տեսնելով մոդելավորող Սերգեյ Երմակովի աշխատանքները: Իսկ Վյաչեսլավ Զայցևը կիևյան գործընկերոջ հավաքածուի վերաբերյալ հայտնեց, որ «այսպիսի զգեստը կարելի էր ստեղծել միայն հոգով»: Հիացմունքը բազմապատկվեց, երբ իրենք տեղեկացան, որ Երմակովը կույր է: Ստեղծել նման գեղեցկություն առանց տեսնելու՝ պարզապես անհնարին է թվում, մինչդեռ Երմակովի մոդելները լայն տարածում են գտել աշխարհում: Նրա պատվիրատուների թվում են ռուս օլիգարխների տիկնայք, առաջատար հեռուստաալիքների և շոու բիզնեսի ներկայացուցիչներ, «Միսս Տիեզերք» գեղեցկության մրցույթի մասնակիցներ: Կարպետի ամենաթանկարժեք գործերից մեկը, որի քաշն է գրեթե 15 կգ, Երմակովը ստեղծել է «ՎԻԱ ԳՐԱ» վոկալ խմբի մենակատար Նադեժդա Գրանովսկայայի համար:

Դեռ մանկուց Երմակովը երազում էր դիզայների մասնագիտության մասին: 11 տարեկան հասակում նրա մոտ հայտնաբերվեց շաքարախտ, որի արդյունքում նա սկսեց արագորեն կորցնել տեսողությունը: Թվում էր, թե պետք է մանկության երազանքին հրաժեշտ տալ, սակայն ապրելու և ստեղծագործելու անհագուրդ ցանկությունը ի զորու եղավ հրաշք կատարել: Երմակովը չի տեսնում, սակայն զգում է կտորը, և երևակայության մեջ ստեղծում նոր զգեստի էսքիզը: Նրա վերջին հավաքածուն՝ «Օսկարը» նվիրված է աշխարհահռչակ Քաստրին Դենյովին, Լայզա Մինելլիին, Շերոն Սթոունին և Մադոննային:

Գլխավոր խմբագիր
Արմեն Ալավերդյան
Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան
Իզաբելլա Կարապետյան

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ, Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռ.ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am